



«ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՂԱԴԴԻՉ 2-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

խոշորացված համայնքներում եվ համայնքների խմբերում ենթածրագրերի իրականացման

(Միջ-) համայնքային նախաձեռնող խմբերի ստեղծումը

Բաղադրիչ 2-ում մասնակցելու հայտերը իրավունակ համայնքների անունից պատրաստում և ՀՏՁՀ-ին են ներկայացնում ենթածրագրերի նախաձեռնող խմբերը: Նախաձեռնող խմբերի ստեղծման կարգը ներկայացված է ստորև՝

- Խոշորացված համայնքներում նախաձեռնող խմբերը ստեղծվում են ավագանու որոշմամբ:
- Համայնքների միության դեպքում որոշումն ընդունվում է համաձայն միության կանոնադրության: Եթե համայնքների խումբը ստեղծվում է ՄՆՏՁ Ծրագրին մասնակցելու նպատակով կնքվող միջհամայնքային պայմանագրի հիման վրա (որը ստորագրվում է մասնակից համայնքների ավագանիների կամ թաղապետարանների կողմից), նախաձեռնող խումբը ստեղծվում է այն ժողովի որոշմամբ, որը ընդունում է համագործակցելու մասին որոշումը:
- Բոլոր դեպքերում նախաձեռնող խմբի ստեղծման մասին որոշումն ընդունվում է համայնքում գործող հասարակական կազմակերպությունների, գործարար շրջանակների և համայնքի ակտիվ բնակիչների խմբերի հետ խորհրդակցելով:
- Նախաձեռնող խմբերում շահագրգիռ կանանց, երիտասարդների և / կամ այլ խոցելի խմբերի մասնակցությունն ակտիվորեն խրախուսվում է:

Նախաձեռնող խմբերը կարող են ստեղծել Աշխատանքային խմբեր, որոնք կապահովեն տեխնիկական աջակցություն այս գործընթացում:

Բացի հայտերը և ենթածրագրի առաջարկները պատրաստելը և ներկայացնելը, Նախաձեռնող խումբը գործում է որպես կապող օղակ, որի միջոցով իրավասու համայնքների բնակչությունը հայտնում է իր կարծիքը ենթածրագրի և դրա բաղադրիչների կարևորության, առաջնայնության և արդյունավետության վերաբերյալ, կամ ահազանգում է ծրագրի իրականացման, աշխատանքների որակի, ՀՏՁՀ-ի, կապալառուների և այլ շահակիցների հետ համագործակցության հետ կապված խնդիրների մասին: Նախաձեռնող խումբը պատասխանատու է մասնակից համայնքներին կանոնավոր կերպով իրազեկելու ենթածրագրի ընթացքի մասին, անհրաժեշտության դեպքում՝ համայնքի ընդհանուր ժողովներ հրավիրելու, և պահանջի դեպքում՝ ենթածրագրի նյութերը համայնքների անդամներին տրամադրելու համար: